ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«11» դեկտեմբերի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է **Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանհինգ) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Մխիթարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Հ.Պողոսյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՋԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի հինգերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 153-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «3 420 168 600 (երեք միլիարդ չորս հարյուր քսան միլիոն հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 470 265 300 (երեք միլիարդ չորս հարյուր յոթանասուն միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար երեք հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «3 544 916 500 (երեք միլիարդ հինգ հարյուր քառասունչորս միլիոն ինը հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «3 595 013 200 (երեք միլիարդ հինգ հարյուր իննսունհինգ միլիոն տասներեք հազար երկու հարյուր)» թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1, 2, 3, 4 հավելվածների:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետին՝ կատարել սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 131-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 1.Հաստատել՝

1) Կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը ըստ ոլորտների.
ա. մշակութային՝ թվով 19 (տասնինը)՝ համաձայն NN 1-19 հավելվածների.
բ. սպորտային՝ թվով 15 (տասնհինգ)՝ համաձայն NN 20-34 հավելվածների.
գ. նախադպրոցական՝ թվով 24 (քսանչորս) համաձայն NN 35-58 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 131-Ա որոշումը:

3. Կազմակերպությունների տարիֆիկացիաների հաստատումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5 (ՀԻՆԳ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 5 (հինգ) կազմակերպություններին, որպես սուբսիդիա, հատկացնել 1.217.000 (մեկ միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, արտասահմանյան գործուղման, գույքի ձեռքբերման և անհրաժեշտ այլ ծախսերի համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/2/3 գործառական դասակարգման (4511) «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 11 ՀԱՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Առդա» բարեգործական հիմնադրամին, որպես նվիրատվություն, հատկացնել 700.000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, լրացուցիչ ներդրումների արդյունքում փաստացի կառուցված 12-րդ բնակարանը ավարտին հասցնելու նպատակով:

1. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. **ՏԱՐԵՄՈՒՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված՝ թվով 104 (մեկ հարյուր չորս)

Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 080 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,
2) զոհված (մահացած) թվով 171 (մեկ հարյուր յոթանասունմեկ) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3 420 000 (երեք միլիոն չորս հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,
3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240 000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N3 հավելվածի,
4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 233 (երկու հարյուր երեսուներեք) ազատամարտիկներից յուրաքանչյուրին 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2 330 000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 4 հավելվածի,
5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 27 (քսանյոթ) վետերաններից յուրաքանչյուրին 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 405 000 (չորս հարյուր հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,
6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 23 (քսաներեք) վետերաններից՝ յուրաքանչյուրին 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 345 000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի,
7) Երկրապահ կամավորների միության անդամներ սոցիալապես անապահով՝ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը 240 000 (երկու հարյուր քառասուն հազար)՝ Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 7 հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 1 350 000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ջեռուցման համակարգ տեղադրելու նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՆԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 955.000 (ինը հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, մարզադպրոցին անհրաժեշտ ջեռուցման ֆանկոլային համակարգ ձեռք բերելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ «ԱՐՄԻՆԵ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն, 2019 թվականի հունվարից մինչև դեկտեմբերը ներառյալ յուրաքանչյուր ամիս հատկացնել 20.000-ական (քսանհազարական) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԱՆԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել կազմակերպության գույքի դուրսգրումը՝ համաձայն հավելվածի:
2. Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:
3. Դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի՝ օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-Ի N 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դադարեցնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի մայիսի 06-ի ««Գյումրիի ժողգործիքների պետական նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 87-Ա որոշման գործողությունը:
2. Լուծել «Գյումրի ժողգործիքների պետական նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված՝ գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին 2016 թվականի հուլիսի 20-ի պայմանագիրը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի «Քանդակագործության ազգային պարկ-թանգարան» մասնաճյուղին անհատույց օգտագործման իրավունքով համայնքապատկան հողամաս հատկացնելու մասին» N 119-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 1-ին կետում «130056 (հարյուր երեսուն հազար հիսունվեց)» թիվն ու բառերը փոխարինել «126773,63 (մեկ հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր յոթանասուներեք ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) թվով և բառերով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 126-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) հավելվածի 7-րդ տողի 6-րդ սյունակում «1 968 000» թիվը փոխարինել «1 168 000» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 172-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ռիժկովի փողոց N 6/11 հասցեի շվաքարանն ու հողամասը մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» N 172-Ա որոշումը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 208-Ա ՈՐՈՇՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿԻ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Դադարեցնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական նշանակության շենք-շինություններն ու դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերն անհատույց օգտագործման տրամադրելու և Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 195-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N208-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի՝

երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը քաղաք Գյումրի Մյասնիկյան փողոց N 118 հասցեի 194,26 (հարյուր իննսունչորս ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունը և 699,94 (վեց հարյուր իննսունինն ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը» գործողությունը:

2. Լուծել «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքված գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին 2017 թվականի հունիսի 30-ի N 1926 պայմանագիրը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 1089-Ն ՈՐՈՇՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՐԱԿԱ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 1089-Ն որոշման մեջ հողերի նպատակային և գործառնական նշանակությունների անհամապատասխանության դեպքում գերակա ճանաչել գլխավոր հատակագծի դրույթները և հողերի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել գլխավոր հատակագծի պահանջներին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑ N 12/2 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Արման Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Աճուրդով օտարել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13112018-08-0027 վկայական) Կարո Հալաբյան փողոց N 12/2 հասցեի 987.17 (ինը հարյուր ութսունյոթ ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շինությունը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 08-001-0126-0004 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ 0.057374 (զրո ամբողջ հիսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:
2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 09111811 անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, հաստատել աճուրդի մեկնարկային գինը՝ 4 100 000 (չորս միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑ N 162/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2271974 վկայական) Շիրակացի փողոց N 162/1 հասցեի 255,77 (երկու հարյուր հիսունհինգ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակության 0,033551 (զրո ամբողջ երեսուներեք հազար հինգ հարյուր հիսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցույթով՝ 10 (տաս) տարի ժամկետով տրամադրել վարձակալության՝ բժշկական ծառայություն կազմակերպելու նպատակով:

2. Մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել տարեկան՝ 85000 (ութսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՄԱՆՈՒԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԼԻԼԻԹ ՍԱՔՈՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի քաղաքի N 10 դպրոցի ճակատային մասում 1988 թվականի երկրաշարժին զոհված մանուկ բանաստեղծ Լիլիթ Սաքոյանին նվիրված հուշատախտակի տեղադրմանը:
2. Հուշատախտակի տեղադրման ծախսերը նվաստացնել Լիլիթ Սաքոյանի հարազատների միջոցներով:

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 146-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ. ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 3 (Արման Գրիգորյան, Արտյոմ Ղարաղազարյան, Ավետիս Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2019 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2018 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 217-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 146-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 4 (Ս.Աստոյան, Ա.Խաչատրյան, Ա.Մխիթարյան, Ա.Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2012 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 169-Ա որոշման 3-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշումը:

4. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով՝ համաձայն N 3 հավելվածի:
5. Սույն որոշումը համայնքային ծառայողների մասով ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունվելիք իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից, իսկ տեխսպասարկման անձնակազմի մասով՝ 2018 թվականի դեկտեմբերի 14-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 19 (ՏԱՍՆԻՆԸ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՅՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 19 (տասնինը) համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին, որպես նվիրաբերություն, հատկացնել գույք՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպել և իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2018 թվականի աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, միջազգային խոշոր մրցաշարերում չեմպիոն դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 10.000.000 (տաս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ԼՍԵՑԻՆ.

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 05-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու, կանոնադրությունը, ամրացվող գույքի կազմը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածությանը համաձայնություն տալու մասին» N 56-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 4-րդ կետով հաստատված N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 01-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ ՄԵԿ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնել թվով մեկ հատուկ տեխնիկայի գնումը երկրորդական շուկայից՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

2. Այդ նպատակով հատկացնել 7.700.000 (յոթ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2018 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

4. Գնված տեխնիկան ձևակերպել համայնքի հաշվեկշռում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2019 թվականի փետրվարի 12-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Մխիթարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ. Պողոսյան

Ա.Առաքելյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«11» դեկտեմբերի 2018թ.